Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

# Վ Ա Ն Ա

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ Հ. Խ. Ս. Հ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ № 1 ՏԵՂԵԿԱԳՐԻ

Զ Ա Յ Ն Ա Գ Ր Ե Ց Ի Ն

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ ՅԵՎ ԳԱՐԵԳԻՆ ԳԱՐԴԱՇՅԱՆ

1 9 2 7

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Հ. Խ. Ս. Հ.
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՎԱՆԱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ № 1 ՏԵՂԵԿԱԳՐԻ

ՁԱՅՆԱԳՐԵՑԻՆ
ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ ՅԵՎ ԳԱՐԵԳԻՆ ԳՈՐԴԱՇՅԱՆ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին պատերազմի հետևանքով Թիֆլիս ապաստանած վանեցի գաղթականների ներկայությունից օգտվելով՝ իմ նախկին աշակերտ (այժմ բըժիշկ) Գ. Գորդաշյանը և յես ձեռնարկեցինք 1917—18 թվականներին նրանց մեջ դեռ կենդանի պահված ժողովրդական յերգերը կորստից ազատելու, ձայնագրելու։

Ֆոնոգրաֆով հավաքելու մասին խոսք լինել չէր կարող, յերբ ամենատարրական կենսական պայմաններից զուրկ էյին մարդիկ այդ շրջանում։ Այդ պատճառով վստահություն ունեցանք իրագործելու մեր առաջադրած խնդիրը, հիմնվելով մեր ունեցած փորձառության վրա այդ ասպարեզում, մանավանդ վոր՝ ինչպես հետաքրքրվողն ինքն էլ կտեսնի, յերաժշտական հորինվածքի տեսակետից այդ յերգերը «պարզ» այն մինիատյուր տեսակին են պատկանում, վորպիսին գյուղացին կարող է հարյուր անգամ յերգել առանց աչքի ընկնող շեղումն թույլ տալու իրեն։

Ձայնագրեցինք հարյուրից ավել յերգեր, բոլորն էլ Վանի կամ նրա մոտակա շրջակայքի վերաբերյալ։ Սրանցից առայժմ Գիտության և Արվեստի Ինստիտուտի հրատարակությամբ լույս է տեսնում առաջին հիսնյակը, իբրև առաջին պրակ Վ ա ն ա ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն յ ե ր գ ե ր ի, մնացածը թերևս լույս կտեսնի առաջիկա տարում։

Յերգերի խմբավորումն ու դասավորումը կատարվել է նույն սկզբունքներով, վորոնցով առաջնորդվել եմ տաս տարի առաջ «Շիրակի յերգերը» հրատարակելիս, այսինքն՝ դասավորված են ըստ գամմայական կազմության և ըստ ձայնական ծավալի (հիմնաձայնից հաշված), ժողովածուն ուսումնասիրողներին մեծ դյուրություն տալու համար, վորովհետև այդպիսով նման և իրար վարիանտ կազմող յերգերը ի մի յեն խմբվում և ժողովածուն պարզ պատկեր է ընդունում։

Միայն այստեղ յերգերն ու պարերգերը չեն բաժանված իրարից, վորովհետև այդ յերգերից 65-ը արդեն յերգողների կողմից «գյոնդ» (շրջապարի

մի տեսակը) են հայտաբերված, իսկ միայածն են սակավ բացառությամբ, թե իրենց ծավալով, թե պարբերային ռիթմով և թե կառուցվածքով [illegible]-չով չեն տարբերվում «գյոնդերից» և ըստ ամենայնի յերաժշտական նույն տեսակին են պատկանում.

Ամբողջ նյութը բաժանված է 4 մասի. I մասում մաժոր կայմություն ունեցող պարերգներ և յերգեր, II մասում մինոր կայմություն ունեցողները, III մասում դորիական գամմային պատկանողները և IV մասում մոդուլյացիա ունեցողները. Իսկ յուրաքանչյուր մասում յերգերը դասավորված են ըստ ձայնական ծավալի աճեցման հերթականության.

Յերաժշտական տեսակետից հետաքրքիր է այս ժողովածուն իր պարզ ու հակիրճ թեմայական մոտիվներով, իր շեշտակի և բազմազան ռիթմիկ վոլորումներով. Մեր նորագույն յերաժշտությունը իր զարգացման ընթացքում հաճախ պիտի դիմի այս կուսական աղբյուրին.

Ազգագրական տեսակետից միակ ժողովածուն է, վոր արտահայտում է միայն մի գավառակի կենցաղը, թեև վոչ լրիվ չափով. Յեթե «Շիրակի յերգերը» վոչինչ չեր ասում հին շիրակեցու մասին, վորովհետև նա վաղուց հեռացել է պատմության ասպարեզից և նրա տեղը բռնել է վերջին 100-ամյակի ընթացքում հազար ու մի տեղից գաղթած ազգաբնակությունն իր ուրույն բարբառներով, ուրույն կենցաղով ու կենցաղային յերգերով. «Վ ա ն ա ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն յ ե ր գ ե ր ը» ընդհակառակը տալիս է Վան քաղաքի, Այգեստանի և շրջակա մի քանի գյուղերի յերաժշտական-կենցաղական պատկերը, վայրերի, վորոնց ազգաբնակությունը դարեր շարունակ կապված է յեղել իր հայրենիքին.

ՍՊ. ՄԵԼԻՔՅԱՆ

## ՎԱՆԱ ՅԵՐԳԵՐԻ ՎՐԻՊԱԿՆԵՐ *

| Յերգ | Տուն | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|---|
| № 4 | 3 | 2 | տրընրի | տրընների |
| № 14 | | 5—3 տակտ | d'' | f'' |
| » | | 5—5 » | վերջին f'' 1/4 | f'' 3/8 |
| № 16 | | 2—2 » | h' 1/4 | h' 1/8 |
| № 20 | | 1—1 տակտ | չափը 4/4 | alla breve |
| № 21 | | 1—1 » | » 3/4 | 3/8 |
| № 28 | մետրոնոմ | | 3/4=80 | 2/4=80 |
| № 29 | | 1—2 » | fis' | f' (բեքառ) |
| » | մետրոնոմ | | 3/8=80 | 2/4=80 |
| № 30 | | 1—4 » | e' 2/4 | e' 3/4 |
| » | | վերջին տող | մեկ տեղ | շըխին |
| » | մետրոնոմ | | 3/8=80 | 2/4=80 |
| № 31 | » | | 3/8=160 | 1/4=160 |
| № 34 | մետրոնոմ | | 3/8=60 | 2/4=60 |
| № 36 | վերջին բառը | | գըլխին | գյոնդին |
| № 40 | մետրոնոմ | | 3/8=69 | 1/4=69 |
| № 45 | մետրոնոմ | | 3/8=96 | 1/4=96 |

*) Մոսկվայում տպագրվելու պատճառով սպրդել են այս սխալները.

# I

## 1. ՇԱՀԻՐՆ ԲԱՆՍԻ

(գյոնդ)

♩. = 120



1. Շա - հը - րե - բա - նե, շա - հը - րե բան. շա-հըրե բա-նե գետն ըն-ցի:
2. " " " " " իմ հոր կը-նիկ շեր-վընցի:
3. " " " " " տա-րա շու-կեն ծա-խե-ցի:
4. " " " " " ծա-մոն ա-ռա ծա-մե-ցի:

## 2. ՔՅՈ՛ ՊԱՔ ՁԻ ԽԱԼԱԼ ԷՐԱ

(գյոնդ)

♩ = 112

(խումբ)



(միայնակ) 1. Ծալ է - րա հա՛յ, ծալ է - րա. Ծալ է - րա հա՛յ, ծալ է - րա:

2. Խընձոր թալիմ խամ էրա: 3. Քյո սլաք ձի խալալ էրա:
Խընձոր թալիմ խամ էրա: Քյո սլաք ձի խալալ էրա:

## 3. ԷՇ ՔՅԱՇԵՑԻՆ ԹՈՐՎԱՆ ՊԵՐԱՆ

(գյոնդ)

♩ = 112



(միայնակ) 1. Էշ քյա-շե - ցին թորվան պե-րան, վոտ-կերն ա-րին փա- չա կե-րան:
(խումբ) " " " " " " " " " " "

2. Ոսկոտն արին սուն ու գերան, 3. Խըռպոն* զանի, Կըռպոն խաղա,
Կաշին արին դուֆ նաղարա: Կըռպոն զանի, Խըռպոն խաղա:

---

* Խըռպո = հայրապետ.

## 4. ԱՇԽԱՐՀ ԱԼԱՆ ԹԱԼԱՆ ԷՐ

(գյոնդ)

♩ = 80



(միայնակ) 1. Աշ - խարհ - ա - լան. Թա - լան էր,
(խումբ) " " " " " " " " "



իմ յար քեղ - նից ա - լայ էր:
" " " " " " " " " "

Պարդի ծառեր պանցըր էր,
Սիրած յարը քաղցըր էր:

2. Աղջիկ կայնե կարմընջին,
Վոսկի կընդեն ակընջին:
Էն որ յես քեզ սիրեցի,
Խնձորի ծառի տակին:

3. Պուճուր աղջիկ սևավոր,
Խալխի տըռնըրի սովոր,
Գընա մայրդ կա՛ն չումա,
Թող գիս չանի մեղավոր:

4. Պուճուր աղջիկ մի՛ թըռնե,
Ջեմ կիմիշե անիծե,
Ախըր քո յար կըմեռնի
Վոտներն քյամին կըպըռնե:

5. Ամպելա բուլթա, բուլթա,
Քո կերած կարմիր թուլթա,
Յես սիրեցի, քե առի,
Թող աշխարհն ամի սուլթա:

## 5. ՍՈԽԱԹԱ՛Ն
(գյոնդ)




1. Սո-խա-թան չէր պին-թան* էր, սո-խա-թան չէր պին-թան էր:
2. Աստված խո-կյոց չը-հա-ներ, աստ-ված խո-կյոց չը-հա-ներ:
3. Սո խա-թան լը-ցին պու-տուկ, վոր-թերն ե-լան ջանց տու-տուկ**:
4. Սո-խա-թան լը-ցին կը-ժեր, վոր-թերն ե-լան ջանց*** ծը-ժեր:

---

* պանրի մանրունք.
** դուդուկ, շվի.
*** քանց

## 6. ԾԱՂ, ԵՐԱ ՀԱ՛Յ
(գյոնդ)




1. Ծաղ ե-րա հա՛յ ծաղ ե-րա, դիլ-բար շի-լեն ծաղ ե-րա:
2. Ամ-ներ ե-րաց խով ե-րաց, " " " " " " ":
3. Դիլ-բար շի-լեն ծաղ ե-րա, քու պագ ձի խա-լաղ ե-րա:
4. Ախ-չի քու ա-նունին-չի, տո տղաքո դա-վին ին-չի:

## 7. ՀՈ՛Պ ՄԱՐԱԼ
(գյոնդ)




1. Հո՛պ մարալ, հո՛պ, մա-րալ, հո՛պ, նարալ ջան, վոս-տա-նա բա-լաք սա-րեր,
" " " " " " Ջեմ կար-նար ջախ-րակ մա-ներ:

2. Ջախըրկի վոտն ուռ էր,
Ջախրակ մանող գյո ծուռ էր:

3. Ջախըրկի վոտը պարտ էր,
Ջախրակ մանող նամարդ էր:

4. Ջախըրկի վոտը փուշ էր,
Ջախրակ մանողն պյուպուշ էր:

5. Ջախըրկի վոտը տանձի,
Ջախրակ նանող կուտան ձի:

6. Ջախըրկի վոտը նուշի,
Ջախրակ մանողն անուշի:

## 8. ՎՅՈՒՐԴ՞Ն ԳԴԻ
(կենտպար)




Վյուր-դըն գը-դի կայ-նի խա-ղա, լե, լե, լե ա-շե:
" " " " ջախ-րակ մա-նի, " " " " ":
" " " " նըս-տի խա-ղա, " " " " "
" " " " առ-չկան մա-նի, " " " " "
" " " " թո-նիր վա-ռի, " " " " "
" " " " խա-ցը թը-խի, " " " " "
" " " " ա-լյուր մա-ղի, " " " " "
" " " " խը-մոր ա-րա, " " " " "
" " " " լը-վաց ա-րա, " " " " "
" " " " կը-լոխ լը-վա, " " " " "
" " " " մա-ղեր սանդ-րի, " " " " "
" " " " աչ-քեր տե-ղի, " " " " "
" " " " այ-նա բա խար, " " " " "

Зак.669

## 9. ՏԵՂ, ԾՆՆԴՅԱՆ ՇԱՏԱԽԻ




1. Հոլե - լու-յա, հո-լե-լու-յա, հո-լե - լու-յա:
Մա-միկ, մա միկ, յես քե ծա-ռա, " " " ":
Ինչ կը մա-նես, ինչ կը գը-զես, " " " ":
Պուրթ կը մա-նեմ, պուրթ կը գը-զեմ, " " " ":
Սար-կա վա քին շա-պիկ կա-նեմ, " " " ":
Կար-դա պե-տին փի-լոն կա-նեմ, " " " ":

2. Մամիկ, մամիկ յես քե ծառա,
Սոլերդ խաքի, թող ծըռվըռա,
Ջուր մառնի տար* մեյլար** կընա,
Քյասիմ կոքով մեկ տանձի չիր,
Քրիստոս ծընավ և հայտնեցավ:

---

Ծանոթ. Շատախի շրջակա գյուղերում, ծննդյան գիշերը պատանիները յերթկից թոկով կախում են լապտեր ու յերգում այս „ավետիսը“ յերգից հետո գյուղացիք վարձատրու թյուն լցնում են լապտերի հետ իջեցրած ամանը զանազան մրգերով:

* տար = դար, դարիվեր.
** մեյլար = առանձ հանգստր.

## 10. ՀԱՑ ՆՈՒԲԱՐ
(գյոնդ)




Հայ, Նու-բար, Նու - բար, Նու-բար, իմ բոյ քու բոյ բա - րե - բար:

## 11. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԺԱՄԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ
Ա. վարիանտ




Տյուկոռ - ծի, յես մա - նեմ, յես մա - նեմ, տյուկոռ - ծի.



յես մաս-րա լը - ցեմ, տյուռմա - նի, յես կոռ - ծեմ տյուռմա - նի:

## 12. ՏԵՐՏԵՐԻ ԺԱՄԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ
Բ. վարիանտ




Կուռծուն կուռծուն, կուռծուն կուռծուն, մեղ խա վըրմ կեր ծըշ պըլ տուն,



կելներ ծառ, կեծներ տակ պոչն ի տեւքյանց խառծըկած փանձն ուտերպուչ



թա-լեր տակ, կուռծուն կուռծուն, կուռծուն կուռծուն կուռծուն կուռծուն

## 13. ՔԵՐԾԻ Ը. վարիանտ
(պյոնդ)

Զուռնի նվագ




## 14. ՄՐՇՈՒ ԽՐՈՒ Բ. վարիանտ
(գյոնդ)

Զուռնի նվագ




## 15. ՄՐՇՈՒ ԽՐՈՒ Գ. վարիանտ
(գյոնդ)

Զուռնի նվագ



## 16. ԱԽՉԻ ԱՐԵ ՔՅԵ ՓԱՍ ԱՌՆԵՄ




## 17. ԻՇԽԱՆՆ ԵԿԱՎ

(գյոնդ)




## 18. ԳԱԼԻ ԼՈ

(գյոնդ)




2. Գալիլո, դալիլո ջանըման,
Յար չեմ տեսեր քեզ նըման:

3. Հով ծառը տակ վառ կանեմ,
Իմ բոյ, քո բոյ բար կանեմ:

4. Աշապիկըդ դարահի կանեմ,
Գալմեն քո սըրտով կարեմ:

## 19. ԽՈՐՈՏԻԿ ՄՈՐՈՏԻԿ

(գյոնդ)



## 20. ԼՈ, ԼՈ, ԼՈ ԱԴԸԼԵ

(գյոնդ)




## 21. ՔՅՕԼԸ ՔՅՕԸ ՄԱՐԻՆ

(յերգ)




## 22. ՍԸՄԱՎԸՐԻ ԴԱՐԻ՛Ն ԴԸՐ



## 23. ԳՅՈՒԼԸ




2. Գյուլա: Կայնել ես դանգի հովին, շան աղջիկ,
քամին տա սիվտակ դոշին:

3. Գյուլա: Ըշրոխաղա բերվի շան տղա,
Թող շան տըղեն երվի:

## 24. ԼԱԼՈՒԽԱՆ

(գյոնդ)




Երթանք Երերին,* Լըցնենք Սուրահին,
Ղոչխար վեր բերին, Առնենք նուկիմ յեղ,
Կըթենք թուխ Մաքին, Ընենք ծըվածեղ:

* Երերին Վասպուրականի գյուղերից

## 25. ԵՍ ՈՐ ՄԵՐ ՏԵՐՏԵՐ ԶԻԿ ԱՍԱՑ

(գյոնդ)




3. Եսոր մեր տերտեր զիկ ասաց. ինչ խորոտիկ աչքերմ ունես,
4. յես էլ մեր տերտրոջն ասացի. տեղտիր մը պե տընեմ ինե:

* Առաջին անգամ գյոնդբաշին է յերգում, յերկրորդ անգամ նույնը պարողները:

## 26. ԲՈԼՈՃԿԻ ՅԵՐԳ*

(կենտպար)




* Կերակուրը դաշտ տանելիս գեղջկուհին հրապուրվելով դաշտային մի ջամների տըլտըլոցով, սկսում է պարել նրանց նվագակցության տակ ու յերգել:

## 27. ՄՈՒՐԱՑԿԱՆ ՆԱԶԱՆՔԻ ՑԱՐԳԸ

(Ողորմություն խնդրելիս)



Ա - րան շեն տան տը - ղա,
Նա - զեն պառ - վը - կե - րի,
Ա - րան մե կփոր ա - յուր,
Ա - րան դե - շոտ ա - րա,



Ա - րան տու ամ - հը - ցի,
Նա - զեն մի խաղ - ցու - ցի,
Ա - րան մե կտո - րըմ խաց,
Նա - զեն գը - նա - լու - ի:

## 28. ԱՐԱԲՈ

(կյոնդ)

Զուռնի նվագ



## 29. ՀԱՄԸ ԳՅՈՒԼ, ՀԱՄԸ ՎԱՐԴ

(կյոնդ)



Հա-մը գյուլ, հա-մը վարդ, հա-մը նար - գիզ,
Ծո - վու կը - ռունկ յեր - կեն վիզ.



Թուր լու - լու թուր լու - լու թուր փի - րա - նե:

2. Անո բաբո կարքյա գիս
Թուջար մարդու մի տար գիս Թուրլուլու...

## 30. ՎՈԶԸՐՑՈՑ ՑԱՐԳ

(գյոնդ)



Ը-ր-խը մեր յառ-ծը-վեն փոխի ինքերինց կա - տու. -տու:
Ը - մոթ մեզ մը-նալ [redacted] խար-կա - - -տու:

# II.

## 31. ԿԱՄՑԻՆԵՐԻ ՊՑՈՒՆԴԸ



Լուս-նակ ա-նուշ պու-լո - րա, տա-նը-մը նա, նա, նըմ նա, նա:
Մէջ Թուխամպին մո-լո - րա, " " " " " " " "
Ի- լանք սա-րեր քաղ-ցըր նուշ վայ անուշ, ա-նուշ, ա - նուշ:
Պյո-պիկ վոտ-ներ կերներ փուշ " " " " " " " "

## 32. ՇԻՐՄԱՋՈՒ ՑՆՐԳԸ

(Հարց ու պատասխանով գյոնդ)



(Հարց) Պըր տյու ել-նես խե-րանց խը-ռով, խե-րանց խը-ռով,



ի լի լի տի լի լի (պատաս.) յես ել կելնեմ ճութ ճութ խավող



կախ-վեմ Թը-փով, կախվեմ Թը-փով - ի լի լի լի լի լի:

Պոր տյու ելնես ճութ ճութ խավող, կախվես Թըփով ի լի լի...
Յես ել կելնեմ սուր սուր տանակ, գամ քեզ կըտրեմ, գամ քեզ կըտրեմ,
ի լի լի...

## 33. ՊԱՐԻ ԼՈՒՍ ՔԸ

(գյոնդ)



1. Պա-րի լուս քե կե-վորքա - ղա, խան ա - միր ջան ա-միր:
2. Աս-ծու պա-րին կըրաքե Տիգրան, " " " " " "

3. Քո արաբեն կոտաս քըրա,
4. Թողչ արաբեն յես քե ծառա:

## 34. ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ



1. Սա-րե-րի հո-վին մեռ-նիմ, յա-ման յար,



չեկ յա-րիս բո-յին մեռ-նիմ, յար, յար:

2. Ցերեկ որ ա չեմ տեսե, յաման յար,
Տեսնողի աչքին մեռնիմ, յար, յար:

## 35. ԼԱՃՈՒ ՄԵՐ
(Այգեստանում)




*Անդրե փըֆիկ = կորկոտի մանրունք:

## 36. ՏՈ ԼԱՈ
(Գյոնդ)




## 37. ՄԸԿԸԿՈ ՎԱՆԱ, ՄԸԿԸԿՈ ՄԵՅՎԱՆ*




*Այս եղանակով է երգվում „Ցեղունըկե երգը" տես „Պանդուխտ վանեցի," 126 երես:

## 38. ՆԱՆԻ ՊԸՏԵՐ*

(գյոնդ)




* Պըտեր = Պետիկ-հայ կնոջ անուն։

## 39. ՄԹՐԸՃՆԵՐԻ ԿԱՊԻԿ ԽԱՂԱՑՆՈՂԻ ԵՐԳԸ

(վանա շրջանում)




## 40. ԿԱԿՂԱՄԱՆԱ ԾՈՐԵՆ ԵՄ

(գյոնդ)







## 41. ԱՇԽԱՐՀ ԱՂԱՆ ԹԱԼԱՆ ԵՐ

(գյոնդ)







2. Պարզի ծառեր պանցըր եր,
Սիրած յարը քաղցըր եր։

## 42. ՀԱՄԸ ԳՅՈՒՂ, ՀԱՄԸ ՎԱՐԳ

(գյոնդ)



## 43. ՃԱԽԸՐԿԻ ՎՈՏԸ ԲԱՐԴ ԷՐ

(գյոնդ)



Հոյ նա - րե, հոյ նա րե, ճա - խըր-կի վո - տը բարդ էր,
" " " " " " ճախ-րակ մա նողն նա-մարդ էր։

2. Ճախըրկի վոտըն ուռ էր,
Ճախրակ մանողըն ծուռ էր։

3. Ճախըրկի վոտը փուշ էր,
Ճախրակ մանող պռպռուշ էր։

## 44. ՍԸՆՋԱՆԵ

(գյոնդ)







Սընջա-նե հա՛յ, սըն-ջա-նե հա՛յ սըն-ջա-նե հա՛յ, սըն-ջա - նե։
Դի-նե, դի - նե, դի - նե, դի-նե, դի-նե, դի-նե, դի-նես - տան։

## 45. ՏԱՆ ՏԱՆ ՊԻՊԻ

(Օրորոցի երգ)



1 Տան-տան* պիպի** տան - տա-նա, տանտան մին-չև քը - նա - նա,



ո - րոր չու-զե խեղճ զառնիկ սիրտ պետքե վոր դի-մա - նա։

2. Ծափի ծափի ծիրանի
Կարմիր խընձոր նըմանի
Զյունե ձեռմակ թաթիկներ,
Ուզեն վոսկի մատանի։

3. Փուսուս աղվոր մատանի,
Վառ-վառ վարդի նըմանի,
Վոսկե դերձան մազերը,
Հովը թել-թել կըտանի։

---

* Տանտան, դանդան = դարդար օրոր.
** Պիպի = բալիկ մանկիկ.

Зак. 669

## 46. ԶԸՆԳՈ[1]

(գյոնդ)




2. Ձաղլի փողան կանդըըմա[2]
Ըռան կատուն կավուրմա:

3. Սըրբէկն ուտի կըլավնա,[3]
Յար Զընգո Զընգո Զընգո:

1. Զընգո = կնոջ անուն.
2. Կանդըըմա = սալած փողոց
3. Կըլավնա = չաղանա.

## 47. ՍԱԹԻ-ՄԱԹԻ ՎԱՂՃԱՆ*




Միջի պըտըտողն քույրիս նմանի. էփէ...
Կոտքի նալերնէն յեղբօրս նմանի. ,,
Ականջի ողերէն մայրիս նմանի: ,,

* Այս յեղանակը իմ կարծիքով հայկական չէ:

## 48. ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ*

(գյոնդ)




* Սարի գյալին յերգի վարիանտ.

## 49. ԱԼ ԱԿՈ*

(գյոնդ)




* Երգի բառերը մոռացված են: Թվերի անունները քրդերեն են, իսկ մնացած բառերը հայերեն: Թվերը շարունակվում են մինչև 100:

## 50. ԽՈՐՈՏԻԿ ՄՈՐՈՏԻԿ

(գյոնդ)




2. Յար խորոտիկ Հա-ռուն ու վե, խո-րո-տիկ...
Թ՚ասիկ քու ձեռն լամբաքն յինե...

* Բըմաշ = ճանրաշարժ.

Главлит, Москва №75273. Тир. 1000 эк. Зак. 669 Нотопечатня „Гиза" Колп. 13.